

185 բեր ի նմա, որ եւ ի Ստամպօլ չկայ այնպիսի
 թօր. եւ տեսաք թօր մի Պալէէմաղ անուն,
 որ բերնին չափն խուլած մի էր: Եւ կայր անդ
 երկու երեք տուն հայ. զոր տեսեալ զմեզ
 ջերմնոտ եւ տկար, ընկալան սիրով եւ տա-
 190 րան ի տուն հող տանելով մեզ եւ դարման՝
 չարաթ մի ծառայելով եւ կերակրելով զմեզ:

Եւ առաջնորդեալ հասուցին զմեզ մինչեւ
 ի Կէլի֊Պօլի, որ եւ նա էր մեծ քաղաք եւ
 մեծ սկէլէ. զատրրղայք եւ կէմիքն ամէն անդ
 195 ժողովէին եւ սպասեն քարիտանին, եւ անտի
 երթան ի վերայ թշնամեաց: Այլ եւ կալիօնքն
 Մարայ անդր նաւահանգիստ առնուն: Այլ եւ
 զհացն, զջուրն եւ զայլ կերակուրն անդր
 պատրաստեն: Կացաք անդ ամիս մի. զի շատ
 200 հայ կայր. հարեզայ մի եւ էրէց. եւ ի տաշ-
 խանն օտայ մի ժամ կ'ասէին: Եւ մարդիքն
 չարարարոյք էին:

Իրեք օրն անտի եկաք ի Թէ֊Բի֊ՏԱՂն: Եւ
 այս եւս փոքր սկէլէ էր ի վերայ դարի քաղա-
 205 քին: Եւ կայր հաստատ եկեղեցի մի ի վերայ
 ծովու, զոր Յակօր անուն վարդապետ մի
 Ձէյթունցի, զոր մեծ ջանիւ եւ արօք բազմօք
 շինել էր եւ վախճանեալ թաղեալ կայր ի
 նմա¹: Եւ էր անդ երկուհարիւր կամ աւելի

190 տարման:

¹ Յակօր վ. Ձէյթունցի վախճանած է 1608ին.
 Գր. Դարանաղցի, Ժամանակադրութիւն, էջ 320: